

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 19/6 որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Գիտության կոմիտե:
Հաշվեքննության առարկան	2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեություն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2019 թվականի սեպտեմբերի 24-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 24-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունը «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» ԵՄ բյուջետային աջակցության թիվ ԵՀԳ 2015/038-229 համաձայնագրի նախապայմանների ապահովման նպատակով իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև Առողիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 - Հանրային հատվածի առողիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 200 - Ֆինանսական առողիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 400 - Համապատասխանության առողիտի հիմնարար սկզբունքները» ստանդարտների համաձայն:
Հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի մեթոդաբանության, վերլուծության և միջազգային կապերի վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը:

I. ԱՆԿԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել Գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն) և Կոմիտեի կողմից ծրագրերի կատարման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կոմիտեի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի:

Կոմիտեի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ծրագրերի կատարումն իրականացնել ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարության կարծիքով, թույլ կտա պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից և/կամ անհամապատասխանություններից զերծ ֆինանսական հաշվետվություն:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվության վերաբերյալ: Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի Բարձրագույն Մարմնի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մշակված «Հանրային հատվածի արտաքին ֆինանսական աուդիտի մեթոդաբանության» և «Հանրային հատվածի արտաքին համապատասխանության աուդիտի մեթոդաբանության» համաձայն: Այդ մեթոդաբանություններով պահանջվում է, որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ ֆինանսական հաշվետվությունը զերծ է էական

խեղաթյուրումներից և ծրագրերի կատարումը զերծ է էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվությունում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և Կոմիտեի կողմից ծրագրերի կատարման էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումը:

Ռիսկերի նման գնահատում իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ կապված ֆինանսական հաշվետվության պատրաստման, ճշմարիտ ներկայացման և ծրագրերի իրականացման հետ՝ կազմելու տվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր, սակայն ոչ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Հաշվեքննության աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվության պատրաստման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելու, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության ամբողջական ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ համապատասխանության հաշվեքննության մեր կարծիքը հիմնավորելու համար:

Մենք գտնում ենք, որ ձեռք չենք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ ֆինանսական հաշվեքննության մեր կարծիքը հիմնավորելու համար:

Համապատասխանության հաշվեքննություն՝ բացասական եզրահանգման հիմք

Ինչպես ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 2-րդ մասի 2-րդ կետում, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակում Կոմիտեի կողմից 2018 թվականին կատարված 7,273,374.9 հազ. դրամ դրամարկղային ծախսը չի հիմնավորվել ՀՀ ԳԿ նախագահի 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 63-Ա հրամանի 1-ին հավելվածով հաստատված փաստաթղթերի տեսակներով:

Ինչպես ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 2-րդ մասի 5-րդ կետում, «Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի

շրջանակում Կոմիտեի կողմից 2018 թվականին կատարված 135,000.0 հազ.դրամ դրամարկղային ծախսը չի հիմնավորվել Կոմիտեի ՀՀ ԳԿ նախագահի 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 63-Ա հրամանի 4-րդ հավելվածով հաստատված փաստաթղթերի տեսակներով:

Ինչպես ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 2-րդ մասի 6-րդ կետում, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրային (թեմատիկ) ֆինանսավորման» ծրագրի շրջանակում Կոմիտեի կողմից 2018 թվականին կատարված 1,238,195.0 հազ.դրամ դրամարկղային ծախսը հիմնավորող փաստաթղթերը ներկայացված են ոչ պատշաճ, քանի որ առանձնացված չեն ծրագիրն իրականացնող կազմակերպության կողմից կատարված մնացած ծախսերից:

Ֆինանսական հաշվեքննություն՝ «Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց» եզրահանգման հիմք

Ինչպես ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 2-րդ մասի 2-րդ կետում, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակում Կոմիտեի կողմից 2018 թվականին կատարված 7,273,374.9 հազ. դրամ դրամարկղային ծախսը չի հիմնավորվել ՀՀ ԳԿ նախագահի 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 63-Ա հրամանի 1-ին հավելվածով հաստատված փաստաթղթերի տեսակներով: Արդյունքում, մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակում կատարված ծախսերի վերաբերյալ:

Ինչպես ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 2-րդ մասի 5-րդ կետում, «Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակում Կոմիտեի կողմից 2018 թվականին կատարված 135,000.0 հազ. դրամ դրամարկղային ծախսը չի հիմնավորվել ՀՀ ԳԿ նախագահի 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 63-Ա հրամանի 4-րդ հավելվածով հաստատված փաստաթղթերի տեսակներով: Արդյունքում, մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ «Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակում կատարված ծախսերի վերաբերյալ:

Ինչպես ներկայացված է սույն հաշվետվության 2-րդ մասի 6-րդ կետում, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրային (թեմատիկ) ֆինանսավորման» ծրագրի շրջանակում Կոմիտեի կողմից 2018 թվականին կատարված 1,238,195.0 հազ.դրամ

դրամարկղային ծախսը հիմնավորող փաստաթղթերը ներկայացված են ոչ պատշաճ, քանի որ առանձնացված չեն ծրագիրն իրականացնող կազմակերպության կողմից կատարված մնացած ծախսերից: Արդյունքում, մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրային (թեմատիկ) ֆինանսավորման» ծրագրի շրջանակում կատարված ծախսերի վերաբերյալ:

Համապատասխանության հաշվեքննություն՝ բացասական եզրահանգում

Մեր կարծիքով «Բացասական եզրահանգման հիմք» պարագրաֆում նկարագրված հարցերի նշանակալիության հետևանքով, Կոմիտեի կողմից ծրագրերի կատարումը չի համապատասխանում ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին, որն իր ազդեցությունն ունի ֆինանսական հաշվետվության վերաբերյալ կարծիքի վրա, ինչպես նկարագրված «Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց» պարագրաֆում:

Ֆինանսական հաշվեքննություն՝ «Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց» եզրահանգում

«Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց» եզրահանգման հիմք պարագրաֆում ներկայացված հարցերի նշանակալիության հետևանքով՝ մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ ֆինանսական հաշվեքննության մեր կարծիքը հիմնավորելու համար: Հետևաբար, մենք չենք արտահայտում կարծիք ֆինանսական հաշվետվության վերաբերյալ:

Լևոն Յոլյան

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ

24 դեկտեմբեր, 2019 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Բաղրամյան 19 փող. , ք. Երևան, Հայաստան

ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ 2018 Թ.-ԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի անվանում	2018թ.			
	Հաստատված բյուջե հազ. դրամ	Ճշտված բյուջե հազ. դրամ	Դրամարկղային ծախս հազ. դրամ	Փաստացի ծախս հազ. դրամ
1	2	3	4	5
Ընդամենը	12,004,565.90	12,910,429.03	12,783,522.04	13,300,372.64
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում	7,275,622.50	7,275,622.50	7,273,374.93	8,101,622.59
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	1,306,693.90	1,306,693.90	1,238,195.01	929,850.24
Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն	839,429.30	839,429.30	839,429.20	837,751.00
Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	812,415.00	802,301.00	776,752.70	793,786.61
«Ա. Ալիսանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում և գիտական ներուժի արդիականացում	705,566.30	705,566.30	705,566.30	705,566.30
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	-	660,204.90	658,704.90	689,805.50
«ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին պետական աջակցություն	275,411.00	275,411.00	275,411.00	275,411.00
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	-	247,240.00	242,092.23	242,092.23
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	161,306.00	161,306.00	158,498.34	158,498.34
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրում	158,400.00	158,400.00	158,400.00	144,900.00
Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ	135,000.00	135,000.00	135,000.00	135,596.00
Գրադարանային ծառայություններ	122,589.60	122,589.60	122,589.60	122,589.60

Ծրագրի անվանում	2018թ.			
	Հաստատված բյուջե հազ. դրամ	Ճշտված բյուջե հազ. դրամ	Դրամարկղային ծախս հազ. դրամ	Փաստացի ծախս հազ. դրամ
1	2	3	4	5
Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում	74,287.50	74,287.50	74,287.50	74,287.50
Ներդրումներ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կազմակերպություններում	50,000.00	50,000.00	50,000.00	14,036.90
Գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրում	47,866.80	47,866.80	35,931.50	35,360.90
Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակներ	35,028.00	35,028.00	25,890.60	25,819.70
Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպում, գերեզմանի բարեկարգման և մահարձանի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցություն	-	8,532.23	8,532.23	8,532.23
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում	4,950.00	4,950.00	4,866.00	4,866.00

Քաղվածք 2018 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունից՝ հաստատված ՀՀ ազգային ժողովի 2019 թվականի հունիսի 20-ի ԱԺՈ-003-Ն որոշմամբ:

II. ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐ

1. Պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մոնիթորինգի իրականացում

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 870-Ա/Ք հրամանով հաստատվել է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մոնիթորինգի կարգ, ըստ որի Կոմիտեի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից պետք է իրականացվի ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային ծրագրերի պայմանագրային թեմատիկ նախագծերի մոնիթորինգ՝ ինչպես ներկայացված է նշված կարգի 4-րդ կետով: Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2018 թվականի ընթացքում Կոմիտեի կողմից կարգի համաձայն մոնիթորինգ չի իրականացվել որևէ ծրագրի մասով:

Սույն կարգի 6-րդ կետի համաձայն՝ ծրագրերի մոնիթորինգը պետք է իրականացվի տարեկան մեկ անգամ՝ ոչ ուշ, քան կատարման ավարտից երեք ամիս առաջ:

Մոնիթորինգի չիրականացումը հանգեցնում է ծրագրերի ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության գնահատման անհնարինությանը և Կոմիտեի կողմից ծրագրերի նկատմամբ իրականացվող հսկողության գործընթացների անարդյունավետությանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք իրականացնել ծրագրերի մոնիթորինգի տարեկան պլանավորում և իրականացում համաձայն սույն կարգի:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության համար ֆինանսավորում ստացող կազմակերպությունները սահմանված կարգով ՀՀ գիտության կոմիտե են ներկայացնում գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային ծրագրերի և պայմանագրային (թեմատիկ) ծրագրերի իրականացման հաշվետվություններ:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 19.09.2012 թ. N 870-Ա/Ք հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մոնիթորինգի կարգի» 2-րդ կետի՝ ՀՀ գիտության կոմիտեում իրականացվում է ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից ֆինանսավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների կատարման ընթացքում ձեռք բերված արդյունքների համապատասխանության ստուգում առաջադրանքներով նախատեսվածների հետ: Մասնավորապես, հաշվետվություններով ներկայացված տվյալների հիման վրա պատրաստվել է բազա, որում ընդգրկվել են տեղեկություններ ծրագրի գիտական արդյունքների (գիրք, մենագրություն, կոլեկտիվ մենագրություն, գիտական հոդված, գիտամեթոդական ձեռնարկ, գիտաժողովին ներկայացված զեկույց, արտոնագիր, պաշտպանած թեկնածուական ատենախոսություն և այլն), ձեռք բերված սարքավորումների, իրականացված գործուղումների, կատարողների կազմի, ֆինանսավորման ծավալների (փաստացի կատարված ծախսերի) վերաբերյալ:

Վերոնշյալ բազան (էլեկտրոնային տարբերակը) տրամադրվել է ՀՀ գիտության կոմիտեում հաշվեքննություն իրականացնող անձանց:

Ինչ վերաբերում է գիտական ծրագրերի ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության գնահատմանը, ապա գիտության ոլորտի արդյունավետությունը գիտական արդյունքի առկայությունն է և այդ արդյունքի ներկայացման ձևը, եղանակը: Մասնավորապես, վերջին հինգ տարիների ընթացքում ՀՀ գիտական կազմակերպությունների և բուհերի կողմից հրապարակվել է տարեկան 1100-1200 գիտական հոդված Վեբ օֆ Սայնս (Web of Science) գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված պարբերականներում, իսկ հրապարակումների տարեկան ընդհանուր քանակը մոտ 3300 է: Յուրաքանչյուր հոդվածի վրա հղումների միջին քանակը մոտ 12 է (ըստ Scimago վերլուծության):

Հաշվեքննիչ պալլարի մեկնաբանություն

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 870-Ա/Ք հրամանով հաստատվել է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մոնիթորինգի կարգի 4-րդ կետի համաձայն՝ ծրագրի մոնիթորինգը պետք է նաև ներառի ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, հավաքագրված տվյալների վերլուծություն, ամփոփում, հայտնաբերված խնդիրների վերաբերյալ առաջարկների և ցուցումների մշակում: Հաշվի առնելով հետևյալը՝ վերահաստատում ենք, որ ծրագրի ֆինանսական մասով մոնիթորինգ չի կատարվել:

2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակում

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակում Կոմիտեի կողմից 2018 թվականին կատարվել է 7,273,374.9 հազ.դրամ դրամարկղային ծախս: Տրամադրված ֆինանսավորումը կատարվել է կազմակերպությունների հետ կնքված դրամաշնորհի տրամադրման պայմանագրերի հիման վրա:

2018 թվականի ընթացքում Կոմիտեն ՀՀ ԳԿ նախագահի 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 63-Ա հրամանի 1-ին հավելվածով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման» ծրագրի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվության ձևի 6-րդ՝ ֆինանսական միջոցների օգտագործում կետի համաձայն՝ կազմակերպությունները Կոմիտեին պետք է ներկայացնեին պայմանագրով նախատեսված ձեռքբերումները «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացնելու պատասխանատու ստորաբաժանում և համակարգող սահմանելու, գնահատող հանձնաժողով սահմանելու մասին հրամանների, ինչպես նաև գնահատող հանձնաժողովների արձանագրությունների, կնքված պայմանագրերի պատճենները: Կոմիտեին ներկայացված հաշվետվություններին կից նշված փաստաթղթերը բացակայում են:

Պայմանագրով նախատեսված ձեռքբերումները «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացնելու պատասխանատու ստորաբաժանում և համակարգող սահմանելու, գնահատող հանձնաժողով սահմանելու մասին հրամանների, ինչպես նաև գնահատող հանձնաժողովների արձանագրությունների, կնքված պայմանագրերի պատճենների բացակայությունը հանգեցնում է ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ Կոմիտեի կողմից իրականացվող թերի հսկողության գործընթացների:

Առաջարկություն

Առաջարկում ենք Կոմիտեին ներկայացնել ՀՀ ԳԿ նախագահի 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 63-Ա հրամանի փոփոխության առաջարկ և մշակել արդյունավետ հաշվետվողական համակարգ ստացող կազմակերպության և Կոմիտեի միջև, որը թույլ կտա Կոմիտեին իրականացնել արդյունավետ հսկողություն:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

ՀՀ գիտության կոմիտեի նախագահի 28.11.2016 թ. N 63-Ա հրամանի N 1 հավելվածով հաստատված գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի իրականացման տարեկան հաշվետվության VI բաժնում դրված է պայմանագրով նախատեսված ձեռքբերումները «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացնելու պատասխանատու ստորաբաժանում և համակարգող սահմանելու, գնահատող հանձնաժողով սահմանելու մասին հրամանների, ինչպես նաև գնահատող հանձնաժողովների արձանագրությունների, կնքված պայմանագրերի պատճենները ներկայացնելու պահանջ: Սակայն կազմակերպությունների ղեկավարների հետ աշխատանքային կարգով ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություն՝ վերոնշյալ փաստաթղթերը ՀՀ գիտության կոմիտե ներկայացնել առաջին իսկ պահանջի դեպքում: Արդյունքում, կազմակերպությունում խնայվում է թղթի օգտագործումը, իսկ ՀՀ գիտության կոմիտեում վերանում է դրանց արխիվացման անհրաժեշտությունը: Նախադեպը ունենք, կազմակերպությունների ղեկավարները շատ արագ արձագանքում են:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Ըստ էության առարկություն չի ներկայացվել: Տրվել է պարզաբանում:

3. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերի հաշվետվությունների վերաբերյալ

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակում կնքված պայմանագրերի գծով ընտրանքային կարգով ուսումնասիրված, ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն հրամանի օրինակելի ձև Հ-2-ով հաստատված հիմնարկի կողմից կատարված բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվությունները լրացված են թերություններով, իսկ թվարկված կազմակերպությունները 2018 թվականի տարեկան հաշվետվություններ չեն ներկայացրել:

հազ. դրամ

Կազմակերպություն	Դրամարկղային ծախս
ՀՀ ՄՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ	42,058.83

«Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ	1,868.40
ՀՀ ԱՆ «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ	3,520.00
ՀՀ ԱՆ «Ռ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ	17,318.70
Ընդամենը	64,765.93

Հաշվետվությունների ոչ պատշաճ ներկայացումը կամ դրանց բացակայությունը հանգեցնում է Կոմիտեի կողմից իրականացվող թույլ հսկողության գործընթացներին, և բյուջեի կատարողականի հաշվետվություններում փաստացի ծախսի չհիմնավորմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք հետամուտ լինել հաշվետվությունների պատշաճ և ամբողջական ներկայացմանը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվող հաշվետվությունների ներկայացման ամսաթվերի շրջաբերականին համապատասխան ՀՀ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող բոլոր կազմակերպություններին գրավոր ներկայացվում է տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման ամսաթվերի մասին տեղեկատվություն: Բացի այդ ընթացքում լինում են նաև բանավոր հիշեցումներ: Եթե որևէ կազմակերպություն չի ներկայացնում կամ թերի է ներկայացնում ֆինանսական հաշվետվությունները, գիտության կոմիտեն ֆինանսների նախարարություն ամփոփ հաշվետվությունների ներկայացման կարգը չխախտելու համար ստիպված է տվյալ կազմակերպության մասով ֆինանսական հաշվետվություններն ամփոփել հաշվի առնելով տրամադրված փաստացի ֆինանսավորումը, մինչույն ժամանակ ընդունելով դեբիտորական և կրեդիտորական պարտքերի շարժի բացակայությունը: Այլ գործուն լծակներ գիտության կոմիտեն չունի:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Ներկայացված արձագանքը կրկին անգամ հաստատում է Կոմիտեի կողմից իրականացվող թույլ հսկողության գործընթացը:

4. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերի վերաբերյալ Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից Կոմիտե ներկայացրած հաշվետվությունների վերաբերյալ

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

2018 թվականի ընթացքում Գիտությունների ազգային ակադեմիան Կոմիտեից «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակում ստացել է 4,500,417.0 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն հրամանի օրինակելի ձև Հ-4-ով հաստատված հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին Կոմիտե ներկայացրած հաշվետվությամբ 2017 թվականի տարեվերջի դեբիտորական պարտքը չի համապատասխանում 2018 թվականի տարեսկզբի դեբիտորական պարտքին, սակայն Կոմիտեի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվել է 2017 թվականի տարեվերջի դեբիտորական պարտքը, փոխարենը Կոմիտեի կողմից 816,104.7 հազար դրամով մեծացվել է փաստացի ծախսի մեծությունը, որի վերաբերյալ որևէ հիմնավորում չի ներկայացվել: Ստորև ներկայացնում ենք Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից Կոմիտեին ներկայացված և Կոմիտեի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվությունների տվյալները՝

հազ. դրամ

Հաշվետվություն	Կոմիտեի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված	Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից Կոմիտե ներկայացված	Տարբերություն
Դեբիտորական պարտք 2017 թվականի տարեվերջ	775,580.0	833,241.0	(57,661.0)
Կրեդիտորական պարտք 2017 թվականի տարեվերջ	4.0	4.0	-

Հաշվետվություն	Կոմիտեի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված	Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից Կոմիտե ներկայացված	Տարբերություն
Դեբիտորական պարտք 2018 թվականի տարեսկիզբ	775,580.0	8,923.7	766,656.3
Կրեդիտորական պարտք 2018 թվականի տարեսկիզբ	4.0	7,618.9	(7,614.9)
Դրամարկղային ծախս 2018 թվական	4,435,964.2	4,500,417.0	(64,452.8)
Փաստացի ծախս 2018 թվական	5,196,847.5	4,380,742.7	816,104.8
Դեբիտորական պարտք տարեվերջ 2018 թվական	19,090.2	23,325.9	(4,235.7)
Կրեդիտորական պարտք 2018 թվականի տարեվերջ	4,397.4	4,397.4	-

Հաշվետվությունների ոչ պատշաճ ներկայացումը կամ դրանց բացակայությունը հանգեցնում է Կոմիտեի կողմից իրականացվող թույլ հսկողության գործընթացների, և բյուջեի կտարողականի հաշվետվություններում փաստացի ծախսի չհիմնավորմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք հետամուտ լինել հաշվետվությունների պատշաճ և ամբողջական ներկայացմանը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Ներկայացնում են ՀՀ ԳԱԱ կողմից տրված պարզաբանումը, ինչը ուղղակիորեն հաստատում է ԳԱԱ փաստացի և դրամարկղային ծախսերի տարբերությունը, ինչն էլ ֆիքսվել էր գիտության կոմիտեի ամփոփ հաշվետվությամբ: Հավաստող փաստաթղթերի պատճենները կցվում են.

ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից 2018 ապրիլի 7-ի 19-Ա հանձնարարականի համաձայն ՀՀ գիտությունների Ազգային Ակադեմիա ՈԱԿ-ում անցկացվել է ստուգում, որի արդյունքում ճշտվել են մնացորդները և արձանագրվել թիվ 19-Ա ակտում, առ՝ 07.06.18թ./ ակտի օրինակը տրամադրվել է ՀՀ ԳԿԿ/:

Ակտում արձանագրված 688,177,5 հազ.դրամ տնտեսումը ՀՀ վարչապետի համաձայնությամբ ուղղվել են հետևյալ ծրագրերի իրականացմանը՝

2.1. Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի 2018թ. մրցանակաբաշխության անցկացման և մրցանակի շնորհման ծախսեր՝ 150,000.0 հազ. դրամ թիվ 1489-Ն ՀՀ կառ. որոշում առ 20.11.2018թ. /, ծրագիրը կատարվել է՝ 116,000.3 հազ. դրամ / շարունակվելու է 2020թ.-ին:

2.2. Հայաստանի ազգային սուպերկոմպյուտերային կենտրոնի հիմնադրում՝ 150,000.0 հազ. դրամ: Պայմանավորվածությունը՝ ձեռք բերել 2020թ., տեղադրել՝

2.3. «Bruker» ընկերության Avance NEO 400 միջուկային մագնիսական ռեզոնանսի սպեկտրոմետրի ձեռքբերում՝ 420/չորս հարյուր քսան/միլիոն դրամ արժողությամբ, որից 388,177,5 հազ. դրամը հատկացվելու է նախորդ տարիներին տնտեսված գումարներից, իսկ տարբերությունը լրացվելու է ՀՀ բյուջեի մասին ՀՀ օրենքում ՀՀ ԳԱԱ-ին հատկացված «Ներդրումներ ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում» հոդվածով նախատեսված գումարներից /ամբողջությամբ կատարված է՝ 333,521.1 հազ. դրամ/

Այդ պատճառով 2018թ. 2-րդ եռամսյակից հաշվետվություններում ներկայացվել է ճշտված դեբիտորական պարտքերը, հաշվի առնելով, որ վերը նշված տարբեր հոդվածների մնացորդների հանրագումարից են կատարվել ներկայացված ծրագրերի ծախսերը:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Կոմիտեի ամփոփ հաշվետվությունը պետք է կազմվի ՀՀ Ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն հրամանով սահմանված ձևով ՀՀ ԳԱԱ կողմից կազմված և հաստատված հաշվետվությունների հիման վրա, այլ ոչ թե ՀՀ ԳԱԱ կողմից տրված պարզաբանման:

5. Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման շրջանակում

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

«Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակում Կոմիտեի կողմից 2018 թվականին կատարվել է 135,000.0 հազ. դրամ դրամարկղային ծախս: Տրամադրված ֆինանսավորումը կատարվել է կազմակերպությունների հետ կնքված դրամաշնորհի տրամադրման պայմանագրերի հիման վրա:

ՀՀ ԳԿ նախագահի 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 63-Ա հրամանի 4-րդ հավելվածով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային ծրագրային ֆինանսավորման» ծրագրի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվության ձևի 4-րդ՝ ֆինանսական միջոցների օգտագործում կետի համաձայն՝ կազմակերպությունները պետք է Կոմիտեին ներկայացնեին պայմանագրով նախատեսված ծախսերը հաստատող բոլոր փաստաթղթերի պատճենները: Կոմիտեին ներկայացված հաշվետվություններին կից նշված փաստաթղթերը բացակայում են:

Փաստացի ծախսերը հավաստող փաստաթղթերի բացակայությունը հանգեցնում է ծրագրերի ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ Կոմիտեի կողմից իրականացվող թերի հսկողության գործընթացների:

Առաջարկություն

Առաջարկում ենք Կոմիտեին ներկայացնել ՀՀ ԳԿ նախագահի 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 63-Ա հրամանի փոփոխության առաջարկ և մշակել արդյունավետ հաշվետվողական համակարգ ստացող կազմակերպության և Կոմիտեի միջև, որը թույլ կտա Կոմիտեին իրականացնել արդյունավետ հսկողություն:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

ՀՀ գիտության կոմիտեի նախագահի 28.11.2016 թ. N 63-Ա հրամանի N 4 հավելվածով հաստատված գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորման պետական ծրագրի իրականացման ընթացիկ հաշվետվության IV բաժնում դրված է փաստացի ծախսերը հաստատող բոլոր փաստաթղթերի պատճենները ներկայացնելու պահանջ: Սակայն կազմակերպությունների ղեկավարների հետ աշխատանքային կարգով ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություն՝ վերոնշյալ փաստաթղթերը ՀՀ գիտության կոմիտե ներկայացնել առաջին իսկ պահանջի դեպքում: Արդյունքում, կազմակերպությունում խնայվում է թղթի օգտագործումը, իսկ ՀՀ գիտության կոմիտեում վերանում է դրանց արխիվացման անհրաժեշտությունը: Նույնը վերաբերում է ՀՀ գիտության կոմիտեի նախագահի 28.11.2016 թ. N 63-Ա հրամանի N 5 հավելվածով հաստատված գիտական և գիտատեխնիկական

գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորման պետական ծրագրի իրականացման ամփոփիչ հաշվետվության VII բաժնում դրված նույն պահանջին:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Ըստ էության առարկություն չի ներկայացվել: Տրվել է պարզաբանում:

6. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմայի իրականացման հաշվետվություններ

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմատիկ հետազոտություններ» ծրագրի շրջանակում Կոմիտեի կողմից 2018 թվականին կատարվել է 1,238,195.0 հազ. դրամի դրամարկղային ծախս: Տրամադրված ֆինանսավորումը կատարվել է կազմակերպությունների հետ կնքված դրամաշնորհի տրամադրման պայմանագրերի հիման վրա:

ՀՀ ԳԿ նախագահի 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 63-Ա հրամանի 2-րդ հավելվածով հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմայի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվության ձևի 4-րդ՝ ֆինանսական միջոցների օգտագործում կետի համաձայն՝ կազմակերպությունները պետք է Կոմիտեին ներկայացնեին պայմանագրով նախատեսված ծախսերը հաստատող բոլոր փաստաթղթերի պատճենները: Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ վերոնշյալ հաշվետվություններին կից ներկայացված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը ներկայացված են ոչ պատշաճ, քանի որ առանձնացված չեն ծրագրի ծախսերը կազմակերպության կողմից կատարված մնացած ծախսերից:

Փաստացի ծախսերը հավաստող փաստաթղթերի բացակայությունը հանգեցնում է ծրագրերի ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ Կոմիտեի կողմից իրականացվող թերի հսկողության:

Առաջարկություն

Առաջարկում ենք Կոմիտեին ներկայացնել ՀՀ ԳԿ նախագահի 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 63-Ա հրամանի փոփոխության առաջարկ և մշակել արդյունավետ հաշվետվողական

համակարգ ստացող կազմակերպության և Կոմիտեի միջև, որը թույլ կտա Կոմիտեին իրականացնել արդյունավետ հսկողություն:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Դիտողությունն ընդունվել է, այս ուղղությամբ կիրականացվեն համապատասխան աշխատանքներ:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Առարկություն չի ներկայացվել:

7. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորման վերաբերյալ

Անհամապատասխանություն կամ խեղաթուրում

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրային (թեմատիկ) ֆինանսավորման» ծրագրի շրջանակներում Հայաստանի երիտասարդական հիմնադրամին, երիտասարդ գիտնականների կողմից իրականացվող ծրագրերին աջակցության նպատակով, 2018 թվականի ապրիլի 5-ին կնքված թիվ 1/SCS-YFA նվիրաբերության պայմանագրի հիման վրա տրամադրվել է 100,000.0 հազ. դրամ: Նշված պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ կառավարության «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմատիկ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 2001 թվականի թիվ 1122 որոշման 3-րդ՝ պայմանագրերի կնքումը, թեմաների կատարումն ու ֆինանսավորումը, մասով սահմանված պահանջներին: Համաձայն Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի նախարարությունը հաստատում է թեմատիկ ֆինանսավորման գծով ֆինանսավորվող թեմաների ցանկը և դրանց ղեկավարների ցուցակը, որից հետո «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նշված ցանկում ընդգրկված թեմաների ղեկավարների հետ կնքվում է պայմանագրեր:

Վերոնշյալ պայմանագրի 2.4.4 կետի համաձայն՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամը պետք է Կոմիտեին ներկայացնեք միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, սակայն Կոմիտեում բացակայում են 100,000.0 հազար դրամի ծախսը հիմնավորող փաստաթղթերը և հաշվետվությունը:

Հաշվետվության և ծախսը հիմնավորող փաստաթղթերի բացակայությունը հանգեցրել է Կոմիտեի կողմից նշված ծրագրի նկատմամբ հսկողության բացակայությանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք Կոմիտեին հիմնադրամի հետ պայմանագրային հարաբերությունները համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 1122 որոշման պահանջներին:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված 100 մլն ՀՀ դրամը Հայաստանի երիտասարդական հիմնադրամին է տրամադրվել ՀՀ գիտության կոմիտեի հետ 05.04.2018 թ. կնքված N 1/SCS-YFA նվիրաբերության պայմանագրով՝ ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցության նպատակով:

Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ գիտության առաջընթացին և կադրային ներուժով համալրման գործընթացին, ինչպես նաև աջակցել երիտասարդ գիտնականների ստեղծագործական զարգացմանը: Ծրագրի շրջանակներում համապատասխան անվանակարգերում նախատեսված է դրամաշնորհների տրամադրում, այդ թվում՝ թեմատիկ հետազոտությունների իրականացման համար: Այդ է պատճառը, որ դեռևս 2015 թվականից սկսած, գումարը նախատեսվել է ՀՀ պետական բյուջեի պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման տողով: Քանի որ ծրագրի շրջանակներում դրամաշնորհների տրամադրման համար մրցույթները ՀՀ գիտության կոմիտեն չի կազմակերպում, ուստի չի կարող կնքվել ՀՀ կառավարության 17.11.2001 թ. N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» III մասով սահմանված պայմանագիր, այլ կնքվել է նվիրաբերության պայմանագիր:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կառավարման մարմնի՝ հոգաբարձուների խորհրդի իրավասությանն են պատկանում հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումը, ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը: Հոգաբարձուների խորհրդի նախագահն ի պաշտոնե հանդիսանում է ՀՀ վարչապետը: Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի տարեկան հաշվետվությունը ներկայացվել է ՀՀ նախագահի աշխատակազմ:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Կնքված պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ կառավարության 17.11.2001 թ. N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» III մասով սահմանված պահանջներին:

8. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ծրագրի

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագրի շրջանակում Կոմիտեի կողմից 2018 թվականին կատարվել է 1,238,195.0 հազ.դրամ դրամարկղային ծախս: Տրամադրված ֆինանսավորումը կատարվել է կազմակերպությունների հետ կնքված դրամաշնորհի տրամադրման պայմանագրերի հիման վրա:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Ծրագրի շրջանակում կնքված պայմանագրերի 2.4.6 կետով ընթացիկ հաշվետվության ներկայացման ժամկետ է սահմանվում թեմայի իրականացման ժամկետի սկզբից հաշված 12-րդ ամսվան հաջորդող ամսվա առաջին 10-օրյակը, իսկ ամփոփիչ հաշվետվությունը՝ թեմայի իրականացման ավարտից հետո 20 օրվա ընթացքում, ինչը հնարավորություն չի տալիս պատշաճ հաշվառում տանել բյուջետային տարվա կտրվածքով:

Ֆինանսական հաշվետվության և Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմայի իրականացման ընթացիկ հաշվետվության հաշվետու ժամանակաշրջանների անհամապատասխանությունը կարող է հանգեցնել բյուջեի կատարողական հաշվետվության խեղաթյուրումների:

Առաջարկություն

Առաջարկում ենք Կոմիտեին փոփոխություն կատարել պայմանագրերում և հաշվետվողականության ժամկետները իրականացնել բյուջետային տարվան համապատասխան:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Քանի որ խոսքը գնում է գիտական թեմաների մասին, ապա ամբողջական արդյունքի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ամբողջական տվյալներ

կազմակերպության կողմից իրականացված թեմատիկ ծրագրի մասով, այլապես հնարավոր չի լինի հասկանալ գիտական արդյունավետությունը: Մինևույն ժամանակ զուտ ֆինանսական կտրվածքով կազմակերպությունները Կոմիտե են ներկայացնում եռամսյակային և տարեկան կտրվածքներով ֆինանսական հաշվետվություններ:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Վերահաստատում ենք մեր կողմից ներկայացված առաջարկը *Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմայի իրականացման ընթացիկ հաշվետվության* հաշվետու ժամանակաշրջանը ևս սահմանել օրացուցային տարվա կտրվածքով, որին կից նաև ներկայացվում են սկզբնական հիմնավորող փաստաթղթերը:

9. Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

2018 թվականի ընթացքում Գիտությունների ազգային ակադեմիան «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» ծրագրի շրջանակում ստացել է 226,896.2 հազ. դրամ:

Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից նշված ծրագրի մասով ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն հրամանով հաստատված օրինակելի ձև-4-ով ներկայացված դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին հաշվետվությունը ստորագրված է, սակայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերը լրացված չէ:

Հաշվի առնելով, որ փաստացի ծախսը 231,977.1 հազ. դրամ է, իսկ դրամարկղային ծախսը 226,896.0 հազ. դրամ, ապա 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեբիտորական պարտքը պետք է կազմեր 5,081.1 հազ.դրամ:

Հաշվետվությունների ոչ պատշաճ ներկայացումը հանգեցնում է Կոմիտեի կողմից իրականացվող թույլ հսկողության գործընթացներին, և բյուջեի կտարողականի հաշվետվություններում դեբիտորական պարտքի չհիմնավորմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք հետամուտ լինել հաշվետվությունների պատշաճ և ամբողջական ներկայացմանը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

ՀՀ ԳԱԱ կողմից ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելիս տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ և ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում ծրագրի հաշվետվությունը լրացված չի եղել: Գիտության կոմիտեի կողմից պահանջվել է ներկայացնել պատշաճ ձևով լրացված հաշվետվություն, միևնույն ժամանակ, ժամանակի սղության պատճառով ԳԱԱ-ի հետ բանավոր ճշտվել է առկա դեբիտորական պարտքի չափը, ինչն էլ ներառվել է ամփոփ հաշվետվությունների մեջ: Կից ներկայացնում են ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի պարզաբանող նամակը 5,081.1 հազ. դրամի դեբիտորական պարտքի մասին:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Ըստ էության առարկություն չի ներկայացվել: Տրվել է պարզաբանում:

10. «ՔԵՆԴԼ սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ

10.1 Նյութական արժեքների հաշվառում

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ «ՔԵՆԴԼ սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) 2018 թվականի 25,140.2 հազ. դրամի նյութական արժեքների ծախսագրումները կատարվել են ձեռքբերման փաստաթղթերի՝ հարկային հաշիվների հիման վրա՝ առանց պահանջագրերի և նյութական արժեքների ծախսագրման հաշվետվությունների կազմման: Ավելին, հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Հիմնադրամը հարկային հաշվով ստացված նյութական արժեքները անմիջապես ծախսագրել է առանց դրանք որպես պաշար ճանաչելու և մուտքագրելու պահեստ, ինչպես սահմանված Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (ՀՀՄՍ) 2-ով:

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարումը: Հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը սահմանում է սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևեր: Կազմակերպությունը կարող է օգտագործել այդ ձևերը կամ դրանք սահմանել ինքնուրույն: Հիմնադրամը չի սահմանել նյութական արժեքների ծախսագրման հաշվետվությունների ձևաչափեր:

Նյութական արժեքների ծախսերը հիմնավորող փաստաթղթերի բացակայությունը հանգեցնում է նյութական արժեքների նկատմամբ թույլ հսկողության գործընթացների, ինչպես նաև կարող է հանգեցնել ծախսերի խեղաթյուրման և պարունակել խարդախության ռիսկ:

Առաջարկություն

Առաջարկում ենք «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ սահմանել նյութական արժեքների ծախսը հիմնավորող փաստաթղթեր: Այդ նպատակով արդյունավետ կլինի օգտվել 2016 թվականի փետրվարի 1-ի ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 37-Ն հրամանով հաստատված հանրային հատվածի կազմակերպությունների համար սահմանված սկզբնական փաստաթղթերի օրինակելի ձևերից:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Ինստիտուտի գործունեության յուրահատկություններից ելնելով՝ բոլոր նյութերի գնումներն իրականացվել են տվյալ պահին դրանց անհրաժեշտությունից ելնելով, խմբերի և լաբորատորիաների ղեկավարների կողմից ստորագրված գնման հայտերի հիման վրա: Ձեռք բերված նյութերի և ապրանքների շարժի և համապատասխան նպատակով օգտագործման վերահսկողությունն, այնուհետև դրվել է խմբերի և լաբորատորիաների ղեկավարների վրա: Կատարված դիտողությունից ելնելով՝ անհրաժեշտ ենք համարում ներմուծել նյութական արժեքների հաշվառման կենտրոնացված համակարգ և այսուհետ, դրանց հաշվառումն ու ծախսը արտացոլել (փաստաթղթավորել) օրենքով նախատեսված փաստաթղթերով և հաշվետվություններով:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Առարկություն չի ներկայացվել:

10.2 Վառելիքի հաշվառում

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Հիմնադրամի 2018 թվականի վառելիքը ծախսագրվել է ձեռքբերման փաստաթղթերի՝ հարկային հաշիվների հիման վրա: Հիմնադրամի կողմից կազմվել են երթուղային թերթիկներ, սակայն դրանք չեն հանդիսացել ծախսի ճանաչման համար սկզբնական փաստաթուղթ: Մասնավորապես բոլոր թերթիկներում լրացված չեն տրանսպորտային միջոցի մեկնման վայրերը, արձանագրված չեն մեքենաների

վառելիքի տարաների մնացորդը, նորմայով և փաստացի վառելիքի ծախսը, տնտեսումը կամ գերաժախսը:

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարումը: Վառելիքի ձեռքբերման փաստաթղթերը՝ հարկային հաշիվները, չեն հանդիսանում վառելիքի ծախսի սկզբնական հաշվառման փաստաթուղթ, քանի որ պարունակում են վառելիքի միայն ձեռքբերման գործարքի վերաբերյալ տեղեկատվություն:

Վառելիքի ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ոչ պատշաճ լրացումը հանգեցնում է վառելիքի նկատմամբ թույլ հսկողության գործընթացների, ինչպես նաև կարող է հանգեցնել ծախսերի խեղաթյուրման և պարունակել խարդախության ռիսկ:

Առաջարկություն

Առաջարկում ենք «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ սահմանել վառելիքի ծախսը հիմնավորող փաստաթղթերի ձևաչափեր և դրա լրացման կարգ: Այդ նպատակով արդյունավետ կլինի օգտվել ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի փետրվարի 1-ի թիվ 37-Ն հրամանով հաստատված հանրային հատվածի կազմակերպությունների համար սահմանված սկզբնական փաստաթղթերի օրինակելի ձևերից:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Ինստիտուտի տրանսպորտային միջոցների հիմնական երթուղիները հաստատված են, և վառելիքի հաշվարկն ու տրամադրումը կատարվում է կենտրոնացված կերպով չափաբաժիններով ըստ պահանջարկի: Յուրաքանչյուր չափաբաժին տրամադրելուց ստուգվում է նախորդը և վազքի տարբերությունը: Դրանից դուրս կատարված շարժը, ինչպես օրինակ գիտաժողովների անցկացման, արտասահմանյան պատվիրակությունների ընդունման, գիտական, ուսանողական խմբերի այցելությունների կազմակերպման համար անհրաժեշտ վառելիքի ծախսը լրացուցիչ հիմնավորվում է վազքուղիներից ելնելով: Երթուղային թերթիկների վերաբերյալ նկատառումները հաշվի կառնվեն և կներդրվեն հետագա աշխատանքային պրոցեսի կազմակերպման մեջ:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Առարկություն չի ներկայացվել:

10.3 Հիմնադրամի կողմից կատարված գնումներ

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Հիմնադրամը սնուցման աղբյուրի փոխակերպչի ձեռքբերման նպատակով Պարգև Մանուկյան Ա/Ձ-ի հետ կնքել է ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/9 պայմանագիր՝ 1,680.0 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել է 25% կանխավճարի տրամադրում: Սակայն պարզվել է, որ Հիմնադրամը, առանց բանկային երաշխիքի ձևով կանխավճարի ապահովման, 2018 թվականի ապրիլի 17-ին, ինչպես նաև 2018 թվականի հունիսի 13-ին տրամադրել է 420.0 հազարական դրամի կանխավճարներ, հանգեցնելով անհամապատասխանության «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջի նկատմամբ: Մասնավորապես. համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «պայմանագրով պարզվորարարի կողմից կանխավճար հարկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պարզվորարարին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով»:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Հիմնադրամը Բրայթ Ինդասթրի ՍՊԸ-ի հետ 2018 թվականի փետրվարի 27-ին կատարվել է ապրանքներ գնելու երկու գործարք 875.0 հազ. դրամի և 362.0 հազ. դրամի չափով, հարկային հաշիվների և վճարման հանձնարարագրերի հիման վրա, առանց իրականացնելու պետական գնումների մասին օրենսդրությամբ սահմանված գնում և առանց կնքելու պայմանագիր, ինչը հանգեցրել է անհամապատասխանության «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ մասի նկատմամբ: Մասնավորապես, համաձայն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 11-ին մասի, «բյուջեների միջոցների հաշվին ապրանքներ գնելու, աշխատանքներ կատարելու և ծառայություններ մատուցելու ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է պետական գնումների մասին օրենքով սահմանված կարգով»:

Առանց երաշխիքի կանխավճարի տրամադրումը կարող է հանգեցնել մատակարարի կողմից ապրանքների չմատակարարման ռիսկի:

Առանց գնումների մասին օրենսդրության կիրառմամբ գնում իրականացնելը հանգեցնում է թույլ հսկողության գործընթացների:

Առաջարկություն

Առաջարկում ենք հիմնադրամին հետամուտ լինել պետական գնումները կարգավորող օրենսդրության պահանջների կատարմանը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Ա/Ձ Պարգև Մանուկյանի հետ կնքված ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/9 պայմանագրով փոխանցված 25% կանխավճարների համար բանկային երաշխիքների բացակայությունը բացթողում է ՔԵՆԴԼ ՍՀԻ կողմից: Բրայթ Ինդասթրի ՍՊԸ-ից հարկային հաշվին հիման վրա, առանց պայմանագրի գնված ապրանքներն են՝ մեկական էլ շարժիչի փոխանցման տուփ, էլ. շարժիչ, շարժիչի էլ. փոխակերպիչ և 2 մալուխ միացուցիչներով: Նշված բացթողումները չեն ազդել ստացված ծառայությունների և ապրանքների գնի և որակի վրա: Միջոցներ կձեռնարկվեն գնման ընթացքը բարելավելու և հետագայում նման թերացումներից խուսափելու համար:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Առարկություն չի ներկայացվել: Տրվել է պարզաբանում:

10.4 Հիմնադրամի կողմից կատարված գործուղման ծախսեր

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Հիմնադրամի 2018 թվականի օտարերկրյա պետություններ գործուղվող աշխատողների գործուղման ծախսերը հաշվարկվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման, օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողի և նրա ընտանիքի անդամների, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման կարգերն ու չափերը հաստատելու մասին» թիվ 2335-Ն որոշման համաձայն: Սակայն այս որոշումը, 2011 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ կառավարության թիվ 1466-Ն որոշմամբ ենթարկվել է փոփոխության, որով սահմանվել է օտարերկրյա գործուղվող աշխատողների գործուղման ծախսերի նոր չափեր: Հիմնադրամի կողմից 2018 թվականին բոլոր գործուղման հաշվարկները կատարվել են չփոփոխված որոշմամբ սահմանված չափերով:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Հիմնադրամի 2018 թվականի օտարերկրյա պետություններ գործուղվող աշխատողների գործուղման ծախսերից ավիատոմսերի, հյուրանոցի կացության համար կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը՝ ավիատոմսի նստեցման կտրոնները, գործուղվող աշխատակցի անձնագրի պատճենները, հյուրանոցի կացության անդորրագրերը, բացակայում են:

ՀՀ կառավարության չփոփոխված որոշմամբ սահմանված չափերի կիրառումը հանգեցնում է ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրման, ինչպես նաև գործուղված աշխատակիցների կողմից հետագայում լրացուցիչ պահանջի ներկայացման՝ կապված չվճարված գումարների հետ:

Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի բացակայությունը հանգեցնում է թույլ հսկողության գործընթացների:

Առաջարկություն

Առաջարկում ենք Հիմնադրամին սահմանել պատշաճ հսկողության գործընթացներ գործուղման ծախսերի նկատմամբ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Բոլոր գործուղումների համար առկա են ավիատոմսերը, և գործուղվող աշխատակցի կողմից գործուղման արդյունքները ներկայացվել են ինստիտուտի սեմինարների և աշխատանքային հանդիպումների ժամանակ, տեղ են գտել միջազգային գիտաժողովների և աշխատաժողովների հրապարակումներում: Առկա են հյուրանոցային գիշերավարձերի հաշիվները, բացառությամբ 2018թ. մարտին Օքսֆորդում կայացած ALLEGRO միջազգային աշխատաժողովի համար, որի դեպքում հյուրանոցային վճարը ներառված է եղել մասնակցության վճարի մեջ: Դիտողության համաձայն օրապահիկի հաշվարկը կկատարվի ՀՀ Կառավարության կողմից փոփոխված 1466-Ն որոշմանը համապատասխան:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Առարկություն չի ներկայացվել:

11. Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ

11.1 Հավելավճարների հայտերի ներկայացում

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

«Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» ծրագրի շրջանակում Կոմիտեի կողմից 2018 թվականին կատարվել է 776,752.7 հազ.դրամ դրամարկղային ծախս:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Կոմիտեի նախագահի 2015 թվականի հունվարի 19-ի N 01-Ա/Ք հրամանով հաստատված «ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին վճարվող հավելավճարները կազմակերպություններին տրամադրելու» կարգի (այսուհետ՝ հավելավճարների կարգ) դրույթները խախտվել են: Մասնավորապես՝

- 2-րդ կետով սահմանվում է հավելավճարների տրամադրման հայտերի ներկայացման ժամկետները (մինչև եռամսյակը հաջորդող ամսվա 15-ը), որը ըստ Կոմիտեի կողմից ներկայացված տեղեկանքի չի պահպանվել 86 կազմակերպություններից 65-ի կողմից.
- 37 կազմակերպություններ տարվա ընթացքում ներկայացրել են ընդամենը 1 եռամսյակային հայտ (օրինակ՝ Օպտոէլեկտրոնիկայի ԳԱԿ ՍՊԸ):
- հայտերում առկա են միևնույն անձանց տվյալների կրկնօրինակներ (Երևանի պետական համալսարան հիմնադրամ).
- հայտերում արտացոլված դոկտորների և թեկնածուների ընդհանուր քանակները չեն համապատասխանում իրական քանակներին:

Հայտերի ներկայացման ժամկետների խախտումը հանգեցնում է հավելավճարների ֆինանսավորման սխալ պլանավորմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք հետևողական լինել հայտերի ժամանակին ստացմանը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

- Գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների հայտերի ներկայացման ժամկետի խախտումները մեծամասամբ տեղի են ունենում I-ին եռամսյակում: Դա պայմանավորված է կազմակերպությունների աշխատակիցների ցուցակների ճշտման և գիտական աստիճան ունեցողների ցանկի կազմման գործընթացով և կարգավորվում է փետրվար-մարտ ամիսներին:

- Տարվա ընթացքում մեկ հայտ ներկայացրած կազմակերպություններից ստորև բերված 7-ի ֆինանսավորումը չի ընդգրկում ամբողջ տարին, ինչի հետևանքով այդ կազմակերպություններից ստացվել է 1 հայտ: Դրանք են՝ «Կովկաս-Կասպյան տարածաշրջանի բնիկ ժողովուրդների ինստիտուտ» հիմնադրամի կողմից իրականացվող թեման ավարտվել է մարտի 31-ին, ՀՀ ԿԳՆ «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հավելավճարի տրամադրումը դադարեցվել է գիտական աստիճանի համար հավելավճար ստացող միակ թեկնածուի այլ կազմակերպություն տեղափոխման պատճառով, «Բարվա» ինովացիոն կենտրոն» ՍՊԸ-ի և «Էլո ինովացիոն տեխնոլոգիաներ» ՍՊԸ-ի կողմից կատարվող թեմաների իրականացումը սկսվել է ապրիլ ամսից (II եռամսյակ), ԼՂՀ ԿԳՄՆ «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի թեմայի իրականացումը սկսվել է հոկտեմբեր ամսից (IV եռամսյակ), ՀՀ ՄՆ «Երվանդ Քոչարի թանգարան» ՊՈԱԿ թեմայի իրականացումը սկսվել է նոյեմբեր ամսից (IV եռամսյակ) իսկ ՀՀ ԳՆ «Տեխնիկական մշակաբույսերի փորձարարական կայան» ՊՓԲԸ-ի հավելավճարի տրամադրումը դադարեցվել է գիտական աստիճանի համար հավելավճար ստացող միակ թեկնածուի մահվան պատճառով:
- Մնացած 30 կազմակերպությունների կողմից եռամսյակային պարբերականությամբ հայտերը չներկայացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ կազմակերպությունների գիտական աստիճանի համար հավելավճար ստացողների ցուցակում որևէ փոփոխություն չի կատարվել:
- Գիտական կազմակերպությունների ղեկավարների ստորագրությամբ ներկայացված գիտական աստիճանի համար հավելավճար ստացողների հայտերում կարող են լինել անճշտություններ, որոնք հայտնաբերելու դեպքում ՀՀ ԳԿ համապատասխան ստորաբաժանման կողմից իրականացվում են համապատասխան ուղղումներ:
- Գիտությունների դոկտորների և թեկնածուների հայտերով ներկայացված թվաքանակը կարող է չհամապատասխանել գիտական աստիճանի համար հավելավճար ստացողների թվաքանակին, քանի որ հայտերի հավաքագրման, մուտքագրման և համապատասխան շտեմարանի ստեղծման ընթացքում իրականացվում են մի շարք ստուգումներ: Մասնավորապես իրականացվում է կրկնությունների և աշխատավարձերի ստուգում, ինչի արդյունքում հայտերով ներկայացված թվաքանակը կարող է նվազել:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Վերահաստատում ենք մեր կողմից ներկայացված առաջարկը:

11.2 Հավելավճարների դեբիտորական պարտքեր

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2018 թվականի տարեսկզբին հավելավճարների մասով դեբիտորական պարտքը կազմել է 26,679.4 հազ դրամ, իսկ տարեվերջին՝ 9,645.5 հազ դրամ, որից «ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի մասով տարեսկզբին դեբիտորական պարտքը կազմել է 9,300.0 հազ դրամ, իսկ տարեվերջին՝ 9,500.0 հազ դրամ: Ընդ որում, «ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին 2018 թվականի ընթացքում փոխանցվել է 17,600.0 հազ. դրամ ֆինանսավորում «Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» ծրագրի շրջանակում:

Դեբիտորական պարտքի մնացորդը վկայում է բյուջետային միջոցների սխալ կառավարման մասին և հանգեցնում է թույլ հսկողության գործընթացների:

Առաջարկություն

Առաջարկում ենք այսուհետ ողջամտորեն կառավարել դեբիտորական պարտքերը և պլանավորել տարեկան ծախսը՝ հաշվի առնելով տվյալ կազմակերպության գծով առկա դեբիտորական պարտքի չափը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Կապված հավելավճարների դեբիտորական պարտավորությունների հետ պետք է նշել, որ 2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպություններին տրվող ֆինանսավորումներն իրականացվել են հաշվի առնելով դեբիտորական պարտքերի առկայությունը, այսինքն՝ ամբողջությամբ մաշեցվել են տարեսկզբին առկա դեբիտորական պարտքերը:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Ըստ էության առարկություն չի ներկայացվել: Տրվել է պարզաբանում:

11.3 Հավելավճարների մասով փաստացի ծախս

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հավելավճարների մասով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացրած 2018 թվականի տարեկան հաշվետվության համաձայն ներկայացվել են հետևյալ տվյալները՝

հազ.դրամ

Դեբիտորական պարտք առ 01.01.2018թ.	26,679.4
Դրամարկղայինի ծախս	776,752.7
Փաստացի ծախս	793,786.6
Դեբիտորական պարտք առ 31.12.2018թ.	9,645.5

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ հավելավճարների ծախսը ըստ կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա զեկուցագրերով վճարման ներկայացված թվերի կազմել է 787,375.0 հազ դրամ: Արդյունքում հաշվետվությունում ներկայացվել է 6,411.6 հազ դրամի չափով չհիմնավորված ծախս:

Հաշվետվությունների սխալ ներկայացումը վկայում է թույլ հսկողության գործընթացների մասին:

Առաջարկություն

Առաջարկում ենք այսուհետ հաշվարկել փաստացի կատարված ծախսը ելնելով ծախսը հիմնավորող փաստաթղթերից:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Տարեկան հաշվետվության ամփոփ տվյալները կազմվում են կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա, և այն, որ հայտերի հիման վրա տրամադրված ֆինանսավորման գումարները չեն համապատասխանում փաստացի ծախսի գումարներին, կապված է կազմակերպությունների կողմից տրամադրված տվյալներով, այսինքն՝ որևէ կազմակերպություն մի դեպքում կարող է տարվա կտրվածքով ներկայացնել եռամսյակային հայտերի գումարները, սակայն տարեկան հաշվետվության մեջ որպես փաստացի ծախս ներկայացնել հայտերի հանրագումարին չհամապատասխանող թիվ, ինչն էլ իր հերթին բերում է վերոնշյալ անհամապատասխանությանը:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Առարկություն չի ներկայացվել: Տրվել է պարզաբանում:

11.4 Հավելավճարների էլեկտրոնային շտեմարան

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ հավելավճարները վճարվում են հետևյալ ընթացակարգով.

- կազմակերպություններից նվազագույնը եռամսյակային հաճախականությամբ ստացվում են հայտեր.
- հայտերի հիման վրա տվյալները ներմուծվում են Կոմիտեի կողմից վարվող էլեկտրոնային շտեմարան.
- Կոմիտեի ստորաբաժանման կողմից կազմվում են զեկուցագրեր, որոնց հիման վրա կատարվում են վճարումները:

Նշված ընթացակարգի ուսումնասիրությամբ պարզվեց, որ հայտերի տվյալների հիման վրա պետք է հաշվարկվեր հավելավճարներ դոկտորներին՝ 2,929 անգամ, և թեկնածուներին՝ 6,270 անգամ՝ ընդհանուր 303,200.0 հազ դրամ գումարով: Կոմիտեի կողմից փաստացի ծախսը հաշվարկվել է ընդամենը 302,150.0 հազ դրամ: Կատարվել է 1,050.0 հազ. դրամի պակաս ծախս: Ընդ որում, պակաս է հաշվարկվել դոկտորի 8 վճարում և թեկնածուի 49 վճարում, իսկ ավել՝ դոկտորի 3 վճարում և թեկնածուի 17 վճարում:

Հավելավճարների սխալ հաշվարկը հանգեցնում է թերի հսկողության գործընթացներին, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրմանը:

Առաջարկություն

Առաջարկում ենք այսուհետ վճարումները կատարել հայտերի հիման վրա:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Գիտական աստիճանի համար հավելավճար ստացողների շտեմարանը վարվում է մշտապես և յուրաքանչյուր փոփոխություն ընդգրկվում է նշված շտեմարանում: Կան դեպքեր, երբ կազմակերպության կողմից կատարված փոփոխությունները ՀՀ գիտության կոմիտե են ներկայացվում զգալի ուշացմամբ: Հաջորդաբար ներկայացված փոփոխությունների կատարման արդյունքում նախնական հայտերի թվաքանակը կարող է փոփոխվել, ինչը հանգեցնում է հավելավճար ստացողների թվաքանակի ինչպես ավելացմանը, այնպես էլ նվազմանը:

Դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ ԳԿ համապատասխան ստորաբաժանումը իրականացնում է գիտական կազմակերպությունների հետ յուրաքանչյուր ամսվա դրությամբ առկա գիտությունների դոկտորների և թեկնածուների թվաքանակի ճշտում և ֆինանսավորման է ներկայացվում ստուգված և ճշտված թվաքանակ:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննությունը իրականացվել է հիմնավորող փաստաթղթերի հիման վրա, հետևաբար բանավոր հիմնավորումները չեն կարող հիմք հանդիսանալ վճարման համար և կատարված փոփոխությունները ընդունելի չեն: Ավելին, Կոմիտեն, ունենալով բոլոր լիազորությունները, հետամուտ չի եղել հայտերի ուշացումները կանխելու հարցում:

11.5 Հավելավճարների վճարում

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Գիտության կոմիտեի նախագահի 2015 թվականի հունվարի 19-ի N 01-Ա/Ք հրամանով հաստատված «ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին վճարվող հավելավճարները կազմակերպություններին տրամադրելու» կարգի (այսուհետ՝ հավելավճարների կարգ) 8-րդ կետի համաձայն՝ Կոմիտեի գիտական քաղաքականության վարչության գիտական տեղեկատվության և վերլուծության բաժինը Կոմիտեի գլխավոր քարտուղարին ուղղված զեկուցագրով ներկայացնում է տեղեկանք հավելավճար ստացող գիտաշխատողների ճշգրտված թվաքանակի, ինչպես նաև ըստ կազմակերպությունների հաջորդ ամսում վճարվելիք հավելավճարների վերաբերյալ՝ համաձայն Հավելված 5-ի:

Հաշվեքննության արդյունքում պարզ դարձավ, որ փաստացի յուրաքանչյուր ամիս կատարվել է հավելավճար ստացողների քանակի փոփոխություն, սակայն դա չի ներկայացվել՝ կարգի պահանջներին համապատասխան: Ընդ որում, 2018 թվականի վերջին թվով 6-րդ զեկուցագիրը ներկայացվել է դեկտեմբերի 27-ին, այն դեպքում, երբ տարվա վերջին փոխանցումը արդեն դեկտեմբերի 25-ին կատարված է եղել:

Հավելավճարների կարգի խախտումը հանգեցնում է թույլ հսկողության գործընթացների:

Առաջարկություն

Առաջարկում ենք այսուհետ պահպանել հավելավճարների՝ կարգով սահմանված ընթացակարգը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի կողմից ֆինանսական գործարքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել դեկտեմբերի 25-ը (դրանից հետո գործարքների իրականացման համար

անհրաժեշտ է կառավարության կողմից համապատասխան թույլտվություն), և աշխատանքային տարբերակով արդեն իսկ ունենալով վերջին ֆինանսավորման տվյալները, նախքան զեկուցագրի պաշտոնական ստորագրվելը իրականացել է ֆինանսավորում, նպատակ ունենալով կազմակերպություններին հնարավորինս անխափան տրամադրել իրենց հասանելիք հավելավճարների տարեվերջյան գումարը, որն անշուշտ, համապատասխանեցվել է ստորագրված զեկուցագրի տվյալների հետ:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Ըստ էության առարկություն չի ներկայացվել: Տրվել է պարզաբանում:

11.6 Հավելավճարների վճարման կարգ

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Գիտության կոմիտեի նախագահի 2015 թվականի հունվարի 19-ի N 01-Ա/Ք հրամանով հաստատված «ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին վճարվող հավելավճարները կազմակերպություններին տրամադրելու» կարգի (այսուհետ՝ հավելավճարների կարգ) 9-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետներից ուշ հայտերի ներկայացման դեպքում հավելավճարների տրամադրումը դադարեցվում է և վերսկսվում դրանք ներկայացնելու ամսվա հաջորդող ամսվանից:

Հաշվեքննության արդյունքում պարզ դարձավ, որ հիմնականում հայտերը ներկայացվել են Կարգի 2-րդ և 4-րդ կետերով սահմանված ժամկետների խախտմամբ: Չի կատարվել նաև Կարգի 9-րդ կետի պահանջը:

Հավելավճարների կարգի խախտումը հանգեցնում է թույլ հսկողության գործընթացների:

Առաջարկություն

Առաջարկում ենք այսուհետ պահպանել հավելավճարների՝ կարգով սահմանված ընթացակարգը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Դիտողությունները ընդունված են: Նախատեսվում է կարգի վերանայում՝ գիտական աստիճանի համար հավելավճարների տրամադրման մեխանիզմը շտկելու և բնականոն ընթացքը ապահովելու նպատակով:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Առարկություն չի ներկայացվել: